## ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ

ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին էր նվիրված ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հոբելյանական նստաշրջանը, որը տեղի ունեցավ ԳԱ նիստերի դահլիճում՝ 1972 թ. հոկտեմբերի 25—27-ը:

Հոբելյանական նստաշրջանի նախագահությունում էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանը, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Հ. Մուրադյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Պ. Ղարիբջանյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Լ. Ա. Ստեփանյանը և կուսակցական ու պետական այլ ղեկավար աշխատողներ: Նստաշրջանին մասնակցում էին նաև ՍՍՀՄ ԳԱ նախագահության անդամ Պ. Ն. Պոսպելովը, Վրացական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Ի. Ն. Վեկուան, ակադեմիկոս Ն. Ի. Մուսխելիշվիլին, Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ Մ. Ա. Թոփչիբաշևը:

Նստաշրջանը բացեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. *Համբարձումյանը:* Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկավ *Ա. Ե. Քոչինյանը:* Նա բարձր գնահատեց սովետահայ գիտնականների դերը Հայաստանի սոցիալիստական վերածնության ու բարգավաճման գործում:

Ա. Ե. Քոչինյանը ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և ՀՍՍՀ Մինիստրների սովետի անունից ջերմորեն ողջունեց հյուրերին, ընդհանուր ժողովի ու հոբելյանական նստաշրջանի բոլոր մասնակիցներին, հանրապետության բոլոր գիտաշխատողներին, ցանկանալով նրանց ստեղծագործական նորանոր հաջողություններ հանուն հայրենի գիտության հետագա վերելքի:

Զեկուցողը նշեց, որ սովետական ժողովուրդների միաբանության, բարեկամության ու եղբայրության համաժողովրդական մեծ տոնի նախապատրաստությունը մեր երկրում քաղաքական և աշխատանքային խանդավառություն է առաջացրել: Մեր մեծ հայրենիքի աշխատավորությունը հաջողությամբ կենսագործելով ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումները, սովետների երկրի պանծալի հոբելյանը դիմավորում է նոր ակնառու հաղթանակներով: Այս փառապանծ հոբելյանը արժանավայել են դիմավորում մեր գիտնականները, առողջապահության, լուսավորության, մշակույթի և արվեստի աշխատողները, որոնք ձեռք են բերել հիանալի հաջողություններ:

Այսօր Հայկական ՍՍՀ ԳԱ գիտնականները,— ասաց զեկուցողը,— Մոսկվայի, անդրկովկասյան եղբայրական հանրապետությունների իրենց գործընկերների հետ անցկացնում են ընդհանուր ժողով և հոբելյանական նստաշրջան՝ նվիրված պատմական տարելիցին՝ ՍՍՀ Միության կազմավորման 50-ամյակին: Դա, ինքնըստինքյան, նշանակալի երևույթ է:

Սովետական ժողովրդի հերոսական պայքարի գլխավոր արդյունքը հանդիսացավ մեր երկրում զարգացած սոցիալիստական հասարակարգի կառուցումը: Կոմունիստական կուսակցության լենինյան իմաստուն ազգային քաղաքականության հետևողական և անշեղ կենսագործման շնորհիվ ՍՍՀՄ ժողովուրդները միավորվել են միասնական, կուռ, համերաշխ ընտանիքում:

ՍՍՀՄ քաղաքացին,— ասաց Ա. Ե. Քոչինյանը,— ինչ ազգության էլ պատկանելիս լինի, իրեն հպարտությամբ անվանում է սովետական քաղաքացի: Այն ամենը, ինչ սովետական է, հպարտ է հնչում: Հայաստանը սովետական իշխանության տարիներին դարձավ սուվերեն սոցիալիստական հանրապետություն: Սովետական Հայաստանը իսկական մայր հայրենիք դարձավ նաև պատմական ճակատագրի կամքով աշխարհում ցրված բոլոր հայերի համար:

Մեծ արժեք և հրատապություն են ներկայացնում հասարակական գիտությունների բնագավառում կատարված հե-

տագոտությունները: Մեր պատմաբանները, տնտեսագետները, փիլիսոփաները, լեզվաբանները, գրականագետները և այլ գիտնականներ, հասարակական գիտությունները, մասնավորապես հայագիտությունը, հարստացրել են նոր արժեքավոր աշխատություններով: Հրատարակվում է հայ ժողովրդի բազմահատոր պատմությունը: Զգալի աշխատանք է կատարվել հայկական սովետական հանրագիտարանի հրատարակումը նախապատրաստելու ուղղությամբ:

Կոմունիստական կուսակցությունը մեր գիտնականներից սպասում է նոր հայտնագործություններ, գիտական մտքի նոր թռիչքներ, անձնվեր ծառայություն կուսակցության ու ժողովրդի շահերին:

Թանկագին ընկերներ,— ասաց նա,— այս խոհերով ու բարեմաղթություններով թույլ տվեք հայտնել Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեի, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների սովետի խորին վրստահությունը, որ դուք ձեր ամբողջ տաղանդը, բոլոր ուժերն ու եռանդը կնվիրեք սովետական առաջավոր գիտության հետագա զարգացմանը՝ հանուն մեր երկրում կոմունիզմի հաղթանակի:

Այնուհետև «Ժողովուրդների մեծ ընտանիքի գիտությունը» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. *Համբարձումյանը:* Նա ասաց. Սովետական Միության կազմավորումից ի վեր անցած 50 տարում հայրենական գիտությունը հսկայական թռիչք գործեց, նրվաճելով անհասանելի բարձունք: Դրան մեծապես նպաստում էր գիտելիքների խելացի, համաչափ զարգացումը երկրի բոլոր շրջաններում, աշխատանքի յուրահատուկ բաժանումը տարբեր հանրապետությունների գիտնականների միջև՝ հաշվի առնելով յուրաքանչյուր գիտական կոլեկտիվի հնարավորությունները:

Վ. Հ. Համբարձումյանը նշեց, որ եթե ցարական Ռուսաստանում գիտական հաստատությունները ու կադրերը գտնվում էին կենտրոնական մարզերում, ապա սովետական իշխանության հաստատումից հետո կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը միջոցներ ձեռնարկեցին ամենուրեք զարգացնելու հետազոտական միտքը, ստեղծելու ազգային կադրեր, գիտատեխնիկական բազա: Այդ հոգատարության և ուշադրության արդյունքն էր գիտական խոշոր կենտրոնների ստեղծումը երկրի բոլոր վայրերում, այդ թվում Անդրկովկասում:

Վերջում զեկուցողը համառոտակի բնութագրեց գիտության բոլոր բնագավառներում մեր հանրապետության գիտնականների ձեռք բերած նվաճումները:

Այնուհետև «Ժողովուրդների բարեկամության սոցիալական ու գաղափարական նախադրյալները» զեկուցումով հանդես եկավ ՍՍՀՄ ԳԱ նախագահության անդամ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս *Պ. Ն. Պոսպելովը:* Նա ՍՍՀՄ ԳԱ նախագահության, սովետական բոլոր գիտնականների անունից ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի առթիվ ջերմ ու սրտագին շնորհավորանքներ ուղղեց հանրապետության գիտնականներին և բոլոր աշխատավորներին:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը,— ասաց նա,— քաղաքական պայմաններ ապահովեց, իսկ արտադրության միջոցների սոցիալիստական սեփականության հաստատումը տնտեսական նախադրյալներ ստեղծեց մեկ միասնական միութենական պետության մեջ երկրի բոլոր ժողովուրդների համախմբման համար: ՍՍՀՄ կազմավորման 50 տարին կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակն է, նրա սկզբունքների հետևողական իրականացման արդյունքը:

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն խոսեց այն մասին, թե ինչպես Սովետական Միության բոլոր ժողովուրդները հետևողականորեն են կատարում ՍՄԿԿ XXIV համագումարի առաջադրած սոցիալ-տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման հոյակապ ծրագիրը:

Հանրապետության գիտական աշխատողներին, այնուհետև ջերմորեն ողջունեցին Վրացական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս *Ի. Ն. Վեկուան* և Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս քարտուղար *Մ. Ս. Կաշկայը:*

Նրանք պատմեցին եղբայրական Վրաստանի և Ադրբեջանի գիտնականների նվաճումների, անդրկովկասյան հանրապետությունների գիտությունների ակադեմիաների բարեկամական կապերի և համագործակցության մասին:

Ակադեմիկոս Ի. Ն. Վեկուան նշեց, որ այդ կապերն անընդհատ ամրապնդ-

վում են հանրապետությունների ինքնուրույն ակադեմիաների ստեղծումից ի վեր: Երեք ակադեմիաների գիտնականների մասնակցությամբ պարբերաբար կազմակերպվել են համատեղ գիտական կոնֆերանսներ ու սիմպոզիումներ: Գնալով ավելի ու ավելի են ամրապնդվում բարեկամության ու համագործակցության այդ ավանդույթները, որոնք կնպաստեն գիտական հրատապ պրոբլեմների լուծմանը:

Ելբայրական Ադրբեջանի ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար Մ. Ս. Կուշկայը մասնավորապես ասաց. Մեր հանրապետության տարածքը հիանալի յուրահատկություն ունի, տեղանքը բնորոշվում է յուրահատուկ գոտիներով: Նրա էկոնոմիկայում հատուկ տեղ են գրավում Կասպից ծովի հարստությունները: Այդ ամենը նախադրյալներ է ստեղծում Ադրբեջանում բնական գիտությունների տարբեր ճյուղերի հաջող զարգացման համար:

Սովետական իշխանության տարիներին մեր երկրի ժողովուրդների օգնությամբ հանրապետությունում արդյունավետորեն զարգացել են բնական և հասարակական գիտությունների կարևոր շատ ճյուղեր: Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիան հետազոտական մտքի իսկական կենտրոն է դարձել:

Մ. Ս. Կուշկայը իր ելույթում վկայակոչեց Ադրբեջանի և Հայաստանի գիտնականների արդյունավետ համագործակցության բազմաթիվ օրինակներ:

Իր ուշագրավ զեկուցմամբ ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս *Տ. Ս. Խաչատուրովը* լուսաբանեց ժողովրդատնտեսական պլանավորման և կանխատեսման առանձին հարցեր: Նա ասաց, որ մեր երկիրը ձեռնամուխ է եղել ժողովրդական տնտեսության զարգացման գլխավոր պլանի մշակմանը, որի նպատակն է որոշել կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման ընդհանուր հեռանկարը, հաշվի առնել ժողովրդի և արտադրության աճող պահանջմունքները, ի հայտ բերել գիտատեխնիկական առաջադիմության ուղիները, համաձայնեցնել ճյուղային և տերիտորիալ պլանավորումը և աստիճանաբար ճյուղայինից անցնել ընդհանուր պլանավորման:

«ՍՍՀՄ-ի զարգացումը և մարդկության ապագան» թեմայով զեկուցեց ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ *Ց. Ա. Ստեփանյանը:*

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը պատմության մեջ նմանը չունեցող ազգերի համերաշխ միություն է: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը բազմաթիվ ժողովուրդների ազատություն և սոցիալիստական պետական ինքնուրույնություն բերեց: Ց. Ա. Ստեփանյանը գիտական փաստարկումներով ցույց տվեց, որ ՍՍՀՄ-ում լիովին կենսագործվել է Վ. Ի. Լենինի այն դրույթը, թե սոցիալիստական հանրապետությունների կամավոր միավորումը մեկ բազմազգ պետական միության մեջ սոցիալիզմի կառուցման և ազգերի իսկական՝ արդեն փաստական հավասարության հաստատման ամրակուռ երաշխիքն է:

ՍՍՀՄ գոյության կես դարը աներկբա ցույց է տալիս, որ ազգային և միջազգային սոցիալիստական պետականության այն զուգակցումը, որն իրականացվել է ՍՍՀՄ-ում, անսահման հնարավորություններ է ստեղծում բոլոր ազգերի բուռն ու համաչափ զարգացման, հետամնացության հաղթահարման, նրանց ամենասերտ միավորման և մերձեցման համար: ՍՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության մեծագույն նվաճումներից մեկը ՍՍՀՄ ժողովուրդների ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մշակույթների զարգացումն ու նրանց փոխազդեցության ուժեղացումն է:

Այնուհետև «ՍՍՀՄ-ի կազմավորումը և Սովետական Հայաստանի տնտեսական ծաղկումը» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս *Ա. Ա. Առաքելյանը:*

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով,— ասաց նա,— մեր երկրում արմատապես լուծվեց ազգային հարցը և ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցության համար լայն հնարավորություններ բացվեցին:

Սովետական Միության կազմավորումը նախորդեց Անդրկովկասի ֆեդերացիայի ստեղծումը: Ալ. Մյասնիկյանը, առաջնորդվելով լենինյան դրույթներով, բազմակողմանիորեն հիմնավորեց ֆեդերացիայի կարևորությունը և Հայաստանի՝ նրա մեջ մտնելու անհրաժեշտությունը:

Հայաստանը, ինչպես և մյուս հանրապետությունները, վիթխարի առաջընթաց ապրեց ոչ միայն ժողովրդական տնտեսության, մշակույթի, հասարակական հարաբերությունների, այլև պետական շինարարության բնագավառում: Սովետական ժողովուրդների եղբայրական մեծ ընտանի-

թում հայ ժողովուրդը հասավ վիթխարի հաջողությունների, որոնց մասին նա չէր կարող մինչև անգամ երազել իր բազմադարյան գոյության ամբողջ ընթացքում:

Վերջում զեկուցողն ընդգծեց, որ Հայաստանում ժամանակակից առաջավոր արդյունաբերության և բարձր մեքենայացված գյուղատնտեսության ստեղծումն ու զարգացումը ծառայում են ժողովրդի նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի անընդհատ բարձրացման ամենավեհ խնդիրներին:

Հոբելյանական նստաշրջանում լսվեց *Ս. Ս. Թովմասյանի* «Գիտատեխնիկական հեղափոխությունը և ազգային հարաբերությունների զարգացումը ՍՍՀՄ-ում» զեկուցումը: Նա լուսաբանեց ՍՍՀՄ-ում սոցիալիստական ազգերի և ազգամիջյան հարաբերությունների զարգացման վրա գիտատեխնիկական հեղափոխության ազդեցության տարբեր կողմերը, նշեց, որ ՍՄԿԿ XXIV համագումարի մշակած գիտատեխնիկական առաջադիմության կոմպլեքսային ծրագիրն իրականացնելու նպատակով երկրի աշխատավորները ամենօրյա գործունեությամբ նպաստում են հանրային արտադրության արդյունավետության բարձրացմանը, աշխատանքի արտադրողականության անի տեմպերի արագացմանը:

Զեկուցողը մեծ ուշադրություն նվիրեց գիտության և տեխնիկայի զարգացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրության մեքենայացման և աշխատանքի գիտական կազմակերպման, արտադրանքի տեխնիկական մակարդակի ու որակի բարձրացման, արտադրության պլանավորման բարելավման և տնտեսական խթանման հարցերին: Նշվեց, որ պետք է ավելի ներգրավել գիտնականների և արդյունաբերության աշխատողների, գիտահետազոտական, նախագծային հաստատությունների կապը և ընդհանուր ջանքերով գիտատեխնիկական միտքը ծառայեցնել ժողովրդական տնտեսության գլխավոր նպատակներին:

Հետաքրքրությամբ լսվեց Վրացական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ճ. Վ. Ջիձիգուրիի «Լեզվաբանությունը Վրացական ՍՍՀ-ում» զեկուցումը:

Վրաց բանասերների աշխատությունների հիմնական պրոբլեմատիկան ընդգրկում է վրացերենի, կովկասյան և սրեվելյան լեզուների ուսումնասիրությունը, ընդհանուր լեզվագիտության և փորձարարական հնչյունաբանության հարցերը: Զեկուցողը նշեց, որ հայագիտությունը Վրաստանում զարգացվել է հայ-վրացական պատմա-մշակութային հարաբերությունների ուսումնասիրման հիման վրա: Վրաց հայագետների ուշադրության կենտրոնում է այն գրական մեծահարուստ ժառանգությունը, որ հոգատարությամբ պահվում է հանրապետության գրապահոցներում և իր յուրաքանչյուր էջում բովանդակում վրաց և հայ ժողովուրդների բարեկամության դրվագներ:

Գիտնականների հոբելյանական համաժողովի մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին Ս. Կ. Դարոնյանի «Սովետական բազմազգ գրականության գաղափարական ու գեղագիտական միասնությունը» զեկուցումը:

Ինչպես որ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման ընթացքում կազմավորվեց մարդկանց պատմական նոր ընդհանրությունը,— ասաց նա,— այդպես էլ համաշխարհային մշակույթի պատմության մեջ առաջին անգամ Սովետական Միությունում ստեղծվեց նոր մշակութային ընդհանրություն, որի բաղկացուցիչ մասն է սովետական բազմազգ գրականությունը: Այն միասնական է իր գաղափարա-գեղագիտական մղումներով, իդեալներով, սոցիալիստական ռեալիզմի մեթոդով և բազմազան է իր ազգային դրսևորումներով, ինքնատիպ՝ իր ստեղծագործական անհատականություններով: Մշակույթների մերձեցման կարևոր գործոն են փոխադարձ թարգմանությունները:

Զեկուցողը բազմաթիվ փաստերով ցույց տվեց սովետական ազգային գրականությունների և ռուս գրականության ստեղծագործական բարերար փոխազդեցությունն նշանակությունը, հիմնավորեց այն միտքը, որ ազգային ամեն մի խոշոր գրող միաժամանակ և սովետական գրող է, որի գրական ժառանգությունը հավասարապես մեծ արժեք ունի և թանկ է սովետական բոլոր ժողովուրդների համար:

ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս *Ծ. Պ. Աղայանը* հանդես եկավ «Սովետական Ռուսաստանի դերը ՍՍՀՄ կազմավորման գործում» զեկուցմամբ:

Մեր երկրի ժողովուրդների ֆեդերատիվ կապերը,— ասաց նա,— ծնվել են տակավին մեծ Հոկտեմբերի քուրայում:

Վ. Ի. Լենինը դեռևս 1918 թ. հանճարեղ խորաթափանցությամբ կանխատեսեց, որ հեղափոխական Ռուսաստանի շուրջը կմիավորվեն նորանոր հանրապետություններ: Նրանք կմիավորվեն առանց որևէ հարկադրանքի և կդառնան հզոր և անհաղթ: Կյանքը, ՍՍՀՄ կազմավորման կեսդարյա պատմությունը լիովին հաստատեցին Վ. Ի. Լենինի կանխատեսումը:

ՍՍՀՄ կազմավորելը նշանավորեց կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության մեծագույն հաղթանակը: Մարդկության պատմության մեջ,— ասաց զեկուցողը,— առաջին անգամ ստեղծվեց բոլոր մեծ ու փոքր ժողովուրդների հավասարության վրա հիմնված նոր տիպի բազմազգ պետություն, որն իր մեջ կամավոր սկզբունքով միավորում է հարյուրից ավելի ազգություններ և ժողովուրդներ: Մեր երկրի ժողովուրդները նշելով ՍՍՀՄ կազմավորման 50 տարին, հավատարիմ մնալով լենինյան պատգամներին, իրենց հերոսական աշխատանքով տնտեսական և մշակույթի ծաղկման ասպարեզում հսկայական հաջողությունների են հասել:

Հետաքրքրությամբ լսվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. *Ղարիբջանյանի* «Լենինյան ազգային քաղաքականությունը և սովետական պետականության ստեղծումը Անդրկովկասում» զեկուցումը:

Անդրկովկասի ժողովուրդները,— նշեց նա,— իրավամբ հպարտանում են, որ իրենց արժանի ավանդ ունեն ՍՍՀՄ կազմավորման պատմական գործում:

Զեկուցողը քննադատեց Անդրկովկասի ժողովուրդների պատմության բուրժուական կեղծարարներին, ընդգծեց դաշնակցության գաղափարախոսների դեմ հետևողական պայքար ծավալելու անհրաժեշտությունը: Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում, ամբողջ Անդրկովկասում սովետական կարգերը հաղթանակել և ազգային սովետական պետություններ են ստեղծվել ժողովրդական մասսաների հերոսական պայքարի և այդ պայքարի զոհերի արյան գնով: Այդ հաղթանակը և սովետական կարգերի նվաճումները ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների և առաջին հերթին ռուս ժողովրդի եղբայրական, անշահախնդիր աջակցության արդյունքն է:

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. *Ա. Գալոյանի* «Ազգային հարցի լենինյան լուծումը ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության հիմքն է» զեկուցման մեջ առաջքաշվեցին մի շարք կարևոր հարցեր: Անդրկովկասի ժողովուրդների օրինակով Գ. Ա. Գալոյանը ցույց տվեց լենինյան ազգային քաղաքականության պատմական հաղթանակի նշանակությունը: Կոմունիստական կուսակցությունը ազգային քաղաքականության իրագործման ամբողջ ընթացքում մեծագույն հմտությամբ զուգակցել է ազգային և համապետական շահերը: Անդրկովկասը փայլուն կերպով արտացոլում է ՍՄԿԿ ազգային քաղաքականության ամենաբարերար արդյունքը:

Պատմական գիտությունների դոկտոր Փ. Ա. Ազիզբեկովան «Հայ և ադրբեջանական ժողովուրդների պատմական բարեկամության զարգացումը» զեկուցման մեջ ցույց տվեց մեր եղբայրական ժողովուրդների պատմական բարեկամության զարգացման ուղին: Այդ ժողովուրդների կապերը համագործակցության և փոխօգնության բազմապիսի ձևեր ընդունեցին հեղափոխական պայքարի, սոցիալիստական ու կոմունիստական շինարարության ընթացքում:

ՍՍՀՄ 50-ամյա գոյության ամենահոյակապ նվաճումներից մեկը,— ասաց նա,— բոլոր ազգերի ու ազգությունների սոցիալական և բարոյա-քաղաքական միասնության ստեղծումն է: Հաղթահարելով անցյալի քաղաքական, տնտեսական ու մշակութային անհավասարությունը, ազատվելով շահագործումից ու ճնշումից ազատված, օրավուր կատարելագործվող սոցիալիստական դեմոկրատիայի պայմաններում, դաստիարակվելով ազգերի հավասարության, համերաշխության ու եղբայրության կոմունիստական սկզբունքներով, ՍՍՀՄ ազգությունների նոր սերունդները ձեռք բերեցին նոր քաղաքական ու բարոյական աշխարհընմբռնում, բոլորովին նոր հոգևոր կերպար: Որպես ինքնուրույն ազգային հանրապետություններ, նրանք մեծ չափով ամրապնդվել են, ավելի ու ավելի ընդարձակելով իրենց եղբայրական կապերն ու համագործակցությունը:

Ամփոփելով նստաշրջանի աշխատանքները, ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը նշեց կարդացված զեկուցումների գիտական կարևորությունը, ընդգծեց հումանիստների մեծ դերը եղբայրական հանրապետությունների գիտնականների բարեկամությունն ու համագործակցությունն էլ ավելի ամրապնդելու գործում:

ԺԵՆՅԱ ԾԵՐՈՒՆՅԱՆ